ապրումները։ Նա իր քնարը այժմ նուիրել է հանրային վշտին։ «Մնա՛ք բարեւ» է ասում արեւին, դարունքին, խնկարոյր ծաղիկներին, կարկաչահոս ու սիրուն վտակին, կանաչազեստ բլուրներին։ «Մնա՛ք բարով, համբոյր եւ սէր, դէմքով հրեշտակ կոյս չքնաղ», մնա՛ք բարով, «վայելչութեան պայծառ ժամեր, քաղցր ժպիտ, կեանք մատաղ»։

Աղքատութիւն ես սիրեցի,
Խեղճի լացը, հառաչանք։
Եւ քընարս նուիրեցի
Վիշտ երգելու եւ տանջանք»։
(«Մնա՛ք Բարով»)։

Հանրային ցաւերի աղբիւր են, հայ բանաստեղծի եւ զգայուն սիրտ ունեցող մարդու համար մանաւանդ սեփական ժողովուրդի անօրինակ տխուր վիճակը, նրա անմխիթար ներկան։

Սիրուն է Ցովհաննիսեանի «Նոր Գարուն» ոտանաւորը, համակ անկեղծ վիշտ, որ նա գրի է առել 1896 թուականին, ի տես բազմահազար դաղթական թրքահայ աղգակիցների անյատակ տառապանքի։ Աւելի լաւ է, որ այստեղ ամբողջապէս առաջ բերենք այդ գողտրիկ ոտանաւորը։ Նա մի մօտաւոր գաղափար կարող է տալ Ցովհաննիսեանի քնարի այդ լարի մասին։ Ահա այն.—

Քեզ ըսպասող չը մնաց,
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն.
Գովիդ ասող չը մնաց,
Զո՛ւր ես գալի, ա՛յ գարուն։

Սեւ–մուր պատեց աշխարհին,
Սար ու ձոր դառան արին,
Մեզ վա՜յ բերեց էս տարին —
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն։

Բիւլբիւլն եկաւ՝ վարդ չունի,
Ծաղկոցը կայ՝ զարդ չունի.
Էլ ո՞վ ա որ դարդ չունի —
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն։

Դու ետ բերիր հաւքերին,
Ո՞նց տէր ըլնեն բընքերին,
Սա՛ղ տեղ չկայ մեր երկրին —
Զուր ես գալի, ա՛յ գարուն։

Աշուղի բերանը փակ,
Սազ–քեամանչէն փակի տակ,
Սիրտն ա էրում անկրակ...
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն։

Քեզ ըսպասող չը մնաց,
Զուր ես գալի, ա՛յ գարուն.
Գովիդ ասող չը մնաց —
Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն։

Ի տես աւերակ հայրենիքի եւ բնաւեր ժողովուրդի՝ բանաստեղծի քնարը լալիս է, մելամաղձոտ ու տխուր հնչիւններ արձակում։ Այդ տրամադրութիւնն ենք արտայոլուած դանում նրա մի շարք ոտանաւորներում։ Եւ ուրիշ ի՞նչպէս կարող էր լինել, քանի որ զգայուն բանաստեղծը տեսնում է, թէ ինչպէս հայրենիքը դարերով է լացում. թէեւ բաց են նրա արիւնահոս վէրքերը, բայց, դարձեալ նա «անարցունք աչքից» ծածկած է պահում իր անվերջ տանջանքի ահաւոր գաղտնիքը։

Հակառակ այս յոռետես, կրծող լարերին, սխալ պիտի լինէր ասել, թէ մեր բանաստեղծը առհասարակ անյոյս է իր ժողովուրդի եւ հայրենիքի ապագայի համար։ Ո՛չ. անդամ համատարած խաւարի մէջ՝ նա տեսնում է հեռուն առկայծող շողեր, սփոփիչ ապագայ։ Հանրային վշտով համակ՝ բանաստեղծը որպէս մարդարէ ունի կաղդուրիչ խօսքեր եւս իր ունկընդիրների համար։

Հակառակ որ չարութիւնը իր գոհերը պիտի խլէ, հակառակ որ սպառադէն թշնամին մեր շարքերը պիտի նօսրացնէ, մեզանից լաւերին տանի, դարձեալ կ'ապրինք մենք. «մեռնելու չէ՛ սերմն արդար»։ Կը գայ ժամը, փոթորիկը կը դադարի, եւ «յաղթութիւն կը վաստակեն մեր որդիք» («Մենք միասին») Եւ կամ այս տողերը՝ «Ասում ես, եղբայր» ոտանաւորի մէջ.—

Կը գայ ժամանակ, սիրով կեանք կը տանք
Ու կը բորբոքենք մենք հուրը թաքուն,
Եւ դու կը տեսնես չքնաղ ապարանք
Այնտեղ, ուր հիմա տեսնում ես անիւն։

Ցուսախար եւ յուսատու, յոռետես եւ լաւատես, խաւար ու պայծառ տրամադրութիւնների մի տեսակ համայնապատկեր է Ցովհաննիսեանի «Աշուղ» ծանօթ ոտանաւորը։ Ո՞վ է աշուղը, ժողովրդական զուսանը, եթէ ոչ՝ մարմնացումն իսկ իր ժողովուրդի, անկեղծ